ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի հուլիսի 4-ի, ժամը 11:00-ի նիստի

1. **Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի հաշվետվության մասին:**

   Զեկուցող՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան **Մ.Վ.Բադալյան**:

2. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 8-ի «Գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու ու գիտական խորհրդի 2021 թվականի մայիսի 13-ի N 10 - 4 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 4 - 3 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:**

   Զեկուցող՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Վ.Գրիգորյան**:

Առաջարկվում է գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի կազմում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ատոմ Շավարշի Մարգարյանի փոխարեն ընդգրկել ֆինանսական ֆակուլտետի դեկանի տեղակալ, կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Տիգրան Ռազմիկի Մանուկյանին:

3. **Դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:**

   Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի անդամ **Մ.Վ.Բադալյան**:

   1) **Արփինե Դավիթի Սարգսյան՝** Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

Հայցորդի գործը քննարկվել և երաշխավորվել է գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 28-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 6):

4. Ընթացիկ հարցեր:

1) Թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարներ վերահաստատելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգի 37-րդ կետը, ըստ որի՝ «Յուրաքանչյուր գիտական ղեկավար կարող է միաժամանակ ունենալ 5-ից ոչ ավելի ասպիրանտ և հայցորդ», անհրաժեշտություն է առաջացել կատարել որոշ վերանայումներ և վերահաստատել որոշ ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների գիտական ղեկավարներ:

Հարցը քննարկվել է գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 1-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 7):

2) Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հրատարակչական կարիքների համար լեզուների ամբիոնին արտաժամյա բեռնվածություն սահմանելու և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի ապրիլի 18-ի N 6 - 9 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Վ.Գրիգորյան**:

3) Համալսարանում գործող մարզական խմբակների և հատուկ բժշկական խմբերի կազմի վերանայման և մարզական խմբակների մարզիչների բեռնվածության հաշվարկման նորմատիվներ սահմանելու մասին:

Զեկուցող՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Վ.Գրիգորյան**:

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. հուլիսի 4
Երևան